համանուն առուն, Դագուա լ–ից· Բզենիս առուն, իջնում են միանում, կազմում Զակ–վիս վտակը, ոռոգում են դաշտում խալա, Գորգաձէ, Դիդջամէ, Խիլվաշի եւ Զակվա կայարանը, Ատկուա, Ցեխիսձիրէ եւ Օխ–ըիս–օղլի գեղերը:

Դագուա լեռների հիւսիսային փեշերից իջնում է համանուն առուակը ոռոգում է համանուն եւ Բոբոգավի գեղերի հանդերը եւ Պանասուրանի մօտ թափւում է ծովը: Կինտրիլ գետը սկսւում է Խինս լեռներից, իջնում է Ցերմուխիս – Գիլէ, Սակարիս–Գիլէ, Սատգետիս–Գիլէ, Զիմոխինս, Մեսխիձիրէ, Զերաբոսելի, Ուրտխնալի, Խերկենալ, Զիխվարավլի, Ցխեմլոբանի, Մխեմ–լովանի, Կոբալաուրի, Տկեմակարավի, Վարջանաուլի, Կեցիեթի, Սոդումուրի, Զա–խատի, Կոխի, Օսետուրի, Խուցուբանի, Զե–նիտի, Կոբուլետի, Կանդետի, Սամեբա գեղերը եւ Կաբուլետի կայարանը, 32 կիլո–մետր ընթացքից յետոյ:

Զուրուք–Սուն սկսւում է Աչկվիսթավի բարձունքից, սահման է կազմում Կենդրիչի դաւառակի եւ Գուրիայի, ոռոգում է Ջե–գեդինա, Սկուրա, Ցխրապանա, Ալամբարի գեղերը, անցնում է Ալամբարի աւերակ տա–հարի մօտով եւ թափւում ծովը Սմեկալով–դայի մօտ: